ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Դավիթ Սահակյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ,

Արտյոմ Ղևոնդյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահի տեղակալ,

Տաթևիկ Միքայելյան՝ ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչության միջազգային պայմանագրերի փորձաքննության բաժնի պետ,

Սուրեն Ավետիսյան՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության Եվրասիական տարածաշրջանի վարչության ՀԱՊԿ բաժնի կցորդ,

Լևոն Ավագյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի որակի վերահսկողության վարչության փորձագետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

ք. Մինսկ (Բելառուսի Հանրապետություն), 2021թ. սեպտեմբերի 7-ից 10-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղարի տեղակալ:

4. **Գործուղման նպատակը.**

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի (ՌՏՀՄՀ) նախագահին առընթեր աշխատանքային խմբի և ՀԱՊԿ-ի ՌՏՀՄՀ-ի 19-րդ նիստին մասնակցություն:

5. **Քննարկված թեմաները.**

Քննարկելով օրակարգի 15 հարցերը՝ ՀԱՊԿ-ի ՌՏՀՄՀ-ն ընդունեց հետևյալ որոշումները.

1. Ընդունել ի գիտություն՝ «Զարգացման միջպետական կորպորացիա» բաժնետիրական ընկերության կողմից մշակված ՀԱՊԿ-ի անդամ պետությունների պաշտպանական արդյունաբերական (ռազմարդյունաբերական) ձեռնարկությունների և կազմակերպությունների համագործակցության ու ինտեգրման զարգացման միջոցառումների ծրագիրը (Ծրագիր) մինչև 2030թ.

Հաշվի առնելով վերը նշվածը.

ա) Առաջարկվեց ՌՏՀՄՀ-ի ազգային մասերին մինչև 2021թ. նոյեմբերի 1-ն ավարտել Ծրագրի նախագծի քննարկումը և առաջարկութունները ներկայացնել ՀԱՊԿ քարտուղարություն,

բ) «Զարգացման միջպետական կորպորացիա» ԲԸ-ին՝ մինչև 2021թ. դեկտեմբերի 1-ը քննարկել ներկայացված առաջարկությունները և լրամշակված նախագիծը ներկայացնել ՀԱՊԿ-ի քարտուղարություն,

գ) ՀԱՊԿ-ի ՌՏՀՄՀ-ի քարտուղարին առաջարկվեց վերը նշված լրամշակված նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ՌՏՀՄՀ-ի 20-րդ նիստում քննարկելու համար:

2. Հաշվի առնելով ՀԱՊԿ-ի ՌՏՀՄՀ-ի ռուսական կողմից լրամշակված «ՀԱՊԿ անդամ պետությունների զինված ուժերի մատակարարման առարկաների կատալոգավորման ավտոմատացված համակարգի ավտոմատիզացման համալիր միջոցների ստեղծման նպատակով հետազոտության» համատեղ գիտահետազոտական և «ՀԱՊԿ անդամ պետությունների զինված ուժերի մատակարարման առարկաների կատալոգավորման ավտոմատացված համակարգի ավտոմատիզացման համալիր միջոցների մշակման» համատեղ փորձակոնստրուկտային աշխատանքի արված առաջարկությունները՝ համարել նպատակահարմար և առաջարկվեց.

ա) համատեղ գիտահետազոտական և փորձակոնստրուկտային աշխատանքի անցկացումը ներկա փուլում համարել ժամանակավրեպ՝ միջպետական քարտագրման համակարգի մեթոդական փաստաթղթերի նախնական մշակման անհրաժեշտության պատճառով,

բ) համատեղ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքի անցկացման հարցը քննարկել միջպետական քարտագրման համակարգի մեթոդական փաստաթղթերի հաստատումից հետո:

3. «ՀԱՊԿ-ի շրջանակներում ռազմա-տնտեսական համագործակցության ոլորտում ՀԱՊԿ-ի անդամ երկրների փոխգործակցության համար թվային ինտեգրացիոն հարթակ ստեղծելու մասին» «ՄՈԼՆԻԱ» ԳԱՄ-ի կողմից ներկայացված առաջարկության մասին՝ որոշվեց.

ա) «ՄՈԼՆԻԱ» ԳԱՄ-ի կողմից ներկայացված առաջարկությունը ներկա փուլում համարել ժամանակավրեպ:

բ) առաջարկվեց «ՄՈԼՆԻԱ» ԳԱՄ-ին՝ դիտարկվող նախագծի նախապատրաստման ժամանակ օգտագործել առկա տեխնիկական հիմքերը:

4. ՀԱՊԿ անդամ պետությունների ազգային ձեռնարկությունների և պաշտպանական-արդյունաբերական (ռազմարդյունաբերական) համալիրների արտադրանքի դիվերսիֆիկացիայի հարցերով առցանց կոնֆերանսների հայեցակարգի վերաբերյալ «Բիզոն» ցուցահանդեսային ընկերությունների միավորում» ՓԲԸ-ի առաջարկների մասին հարցը օրակարգից հանվեց:

5. Աֆղանստանում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ, որի մասով Ղրղզստանի ներկայացուցիչները ունեին հատուկ կարծիք:

6. Ընդունվեց ի գիտություն՝ «Ռոստեխ» պետական կորպորացիայի «Կառավարում ռազմատեխնիկական համագործակցության բարձր տեխնոլոգիաների ոլորտում» մագիստրոսական ծրագրի մասին արված առաջարկությունը:

6. Հավանության արժանացան և ընդունվեցին ՀԱՊԿ-ի ՌՏՀՄՀ-ի հետևյալ որոշումները.

1) «ՀԱՊԿ-ի բազային համագումարա-ցուցահանդեսային միջոցառումների մասին» ՀԱՊԿ-ի անվտանգության խորհրդի որոշման նախագիծը,

2) «ՀԱՊԿ-ի շրջանակներում զենքի և ռազմական տեխնիկայի ստանդարտացման ոլորտում առաջնահերթ կազմակերպական և մեթոդական փաստաթղթերի անվանացանկի մասին»,

3) «ՀԱՊԿ անդամ պետությունների զինված ուժերի մատակարարման առարկաների միջպետական կատալոգավորման համակարգի ստեղծման հետագա աշխատանքների կարգի մասին»,

4) «ՀԱՊԿ շրջանակներում ռազմատնտեսական համագործակցության ընթացքում ստացված և օգտագործվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պահպանության հարցերի վերաբերյալ առաջարկությունների մասին»,

5) «Մտավոր գործունեության արդյունքների իրավունքների ենթադրյալ խախտումների փաստերով՝ ռազմատնտեսական համագործակցության մասնակիցների կողմից ՀԱՊԿ ՌՏՀՄՀ՝ ՀԱՊԿ շրջանակներում ռազմատնտեսական համագործակցության ընթացքում ձեռք բերված և օգտագործվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պահպանության հարցերով առընթեր Համակարգող խորհուրդ դիմելու Կարգի մասին»,

6) «2021-2022 թվականներին անցկացվող միջազգային ցուցահանդեսների ցանկում փոփոխություններ կատարելու մասին, որտեղ հնարավոր է ձևավորել ՀԱՊԿ անդամ

երկրների ռազմական, երկակի, հատուկ նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների ցուցադրություն»,

7) «ՀԱՊԿ ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի 2022թ. աշխատանքային ծրագրի մասին»:

8) Որոշվեց ՀԱՊԿ-ի ՌՏՀՄՀ-ի 20-րդ հոբելյանական նիստն անցկացնել Ռուսաստանի Դաշնությունում 2022թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպում է տեղի ունեցել ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալի, ՀԱՊԿ-ի ՌՏՀՄՀ-ի բելառուսական մասի ղեկավարի, Բելառուսի Հանրապետության պետական ռազմարդյունաբերական կոմիտեի նախագահի տեղակալի, Ռուսաստանի Դաշնության տեխնիկական կարգավորման և չափագիտության դաշնային գործակալության ղեկավարի հետ, որոնց հետ քննարկվել է ՀԱՊԿ-ի շրջանակներում զենքի և ռազմական տեխնիկայի ստանդարտացման ոլորտում մեթոդական փաստաթղթերի առաջնահերթություն ստանալու վերաբերյալ հարցերը:

8. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՀԱՊԿ-ի անդամ պետությունների ՌՏՀՄՀ-ն ստեղծվել է՝ նպատակ ունենալով ձևավորել անդամ պետությունների ռազմատնտեսական գործունեության ընդհանուր դաշտ: ՀԱՊԿ-ի անդամ պետությունների ՌՏՀՄՀ-ի շրջանակներում համագործակցությունը կարևոր տեղ է զբաղեցնում ՀՀ անվտանգության համակարգի ապահովման և զարգացման հարցում: Այն գործընկեր պետությունների հետ ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումները և զարգացման հայեցակարգը քննարկելու, տարածաշրջանում գոյություն ունեցող իրավիճակը, մարտահրավերները և դրանց հնարավոր հաղթահարման ուղիները դիտարկելու հնարավորություն է ընձեռում: Այդ հնարավորությունները ճիշտ օգտագործելու դեպքում, ՀԱՊԿ-ը կդառնա կայունության և անվտանգության գլխավոր գործոն:

ՀՀ-ի համար մեծ նշանակություն ունի ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության բոլոր ուղղությունները՝ արտաքին քաղաքական համակարգումը, ռազմատեխնիկական համագործակցությունը և, իհարկե, անվտանգության ոլորտում միասնական մոտեցումն ընդհանուր սպառնալիքներին:

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ
14.09.2021թ.